

Թ Ի Ի 12

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ 1913-14 ՇՐՋԱՆԻ

ԵՐԵՎԱՆԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵՆԷՆ ԵՏՔԸ

ՀԱՐԱՏ ԺՔ.

23 Օգոստ. 1913



Տպագրութիւն Տ. ՏՕՂԱՄԱՃԵԱՆ
Կ. ՊՈԼԻՍ, Պապը-Ալի Հատտէսի, Թիւ. 49

1914

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

- ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ
(Ա. Վիճակ)
1. Տ. Եղիշէ Արքեպս. Դուրեան
 2. Տ. Վահրամ » Մանկունի
 3. Տ. Զարմայր քհնյ. Կէղիւրեան
 - 4.

- (Բ. Վիճակ)
5. Տ. Մաղաքիա Արքեպս. Օրմանեան
 6. Տ. Գրիգորի Ծ. Վ. Պալազեան
 7. Տ. Երուանդ Ծ. Վ. Բէրտաշեան
 8. Տ. Սմբատ Ծ. Վ. Գաղաղեան

- (Գ. Վիճակ)
9. Տ. Հմայեակ Արքեպս. Դիմաքսեան
 10. Տ. Մաղաքիա Եպիսկ. Տէրունեան
 11. Անանիա Վ. Հաղարապետեան
 12. Տ. Միքայէլ քհնյ. Աշնեան

- (Դ. Վիճակ)
13. Տ. Արիստակէս Ա. Զինյ. Զիզմէնեան
 14. Տ. Խորէն » Յարութիւնեան
 15. Տ. Յուսիկ » Բազունի
 16. Տ. Տանատ » Փաշայեան

- (Ե. Վիճակ)
17. Տ. Եղնիկ Ծ. Վ. Պապաեան
 18. Տ. Հմայեակ Բաճ. Էքսէրճեան
 19. Տ. Բարձր » Թագլմեան
 20. Տ. Աբէլ » Երէցեան

- ԱՇԽԱՐՀԱԿԱՆՔ
(Ա. Վիճակ)
- Էյուպ Ս. Եղիա
21. Օննիկ էֆ. Մինասեան

- Խառնակ
22. Պետրոս էֆենտի Հալաճեան
 23. Պետրոս » Խօրասանեան
 - 24.

- Մագրիֆիւղ
25. Երուանդ էֆենտի Պէյազմեան
 26. Թագլուր » Արեւեան
 27. Տօքթ. » Մալխասեան
 28. Յակոբ » Պոյաճեան
 29. Յովհաննէս » Իսապուլեան
 30. Սարգիս » Պէյրէկեան
 - 31.

- Պէյօլիքտէրէ
32. Արշակ էֆենտի Ալպոյանեան

- Սան-ՍԹԷՓԱՆՈ
34. Գէորգ էֆ. Ասլանեան
 35. Խաչիկ էֆենտի Սըլաճեան
 36. Տօքթ. Ստեփան էֆենտի Թէրզեան
- (Բ. Վիճակ)

- Բերա-Գասրմ-Վաշա
37. Աստուածատուր էֆենտի Խաչատրեան
 38. Արամ » Հալաճեան
 39. Արմենակ » Բարսեղեան
 40. Գէորգ » Թորգոմեան
 41. Գիգոր » Շախմեան
 42. Յովհաննէս » Զէօկիւրեան
 43. Սարգիս » Մինասեան
 44. Տր. Վ. » Թորգոմեան
 45. Յովհան » Գարեան

- Գարմալ-Գնալ
- 46.

- Գուրուբէշմէ
- 47.

- Պէշիկմաշ
48. Տրդատ Պէյ Տատեան

- Ֆէրիֆիւղ
49. Եղուարդ էֆենտի Գարակէօզեան
 50. Հրանտ » Ասատուր
 51. Մարկոս » Նաթանեան
 52. Յակոբ » Պահլի

- (Գ. Վիճակ)
- Գասրմֆիւղ

53. Անտոն էֆենտի Թարագ
54. Աղասի » Աղասեան
55. Եղուարդ » Շիրինեան
56. Ներոէս » Օհանեան
57. Մկրտիչ » Արզարեան
58. Պեննէ » Թորոսեան
59. Սարգիս » Էսմէրեան

- Եննի-Գարու
60. Պեննէ էֆենտի Տէյրմէնեան
 61. Վահան » Փափաղեան

- Պալաթ
62. Տօքթ. Կարապետ էֆենտի Եղուպեան
 63. Յարութիւն էֆ. Մոստիքեան
 64. Սարգիս » Սրենց
 65. Հրանտ » Անդրէասեան

- Սկիւտար Եննի-Մանալլէ
66. Թորգոմ էֆենտի Պոյաճեան
 67. Հմայեակ » Խոսրովեան
 68. Վահան » Սուրենեան

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1913—1914 ՆՍՏԱՇՐՋԱՆԻ

ՆԻՍՏ ԺԲ.

23 ՕԳՈՍՏՈՍ 1913

ՆԱԽԱԳԱՀ.— ՊԱՏ. ՏԵՂԱՊԱՀ Տ. ԳԱՐԻԷԼ ՄՐԲԱԶԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ.— ՏՐ. ՏԱՂԱԽԱՐԵԱՆ ԷՖԷՆՏԻ

ՕՐԱԿԱՐԳ

- 1.—Քննութիւն հիմնական նախագծի կանոնագրի երուադէմի Ս. Յակոբեանց վանուց. (Շարունակութիւն վիճաբանութեան):
- 2.—Տեղեկագիր Ասենապեաց Դիւանի ի մասին քրահայոց կողմէ Ամենայն Հայոց Հայրապետին մատուցանելի գրին:
- 3.—Հարցապնդում ի մասին Գաբամանեան Էֆենտիի սպաննութեան:
- 4.—Տեղեկագիր խորհրդարանական Յանձնաժողովոյ մասին հանգուցեալ երեցեան Արքազանի ամբաստանութեանց:

ԲԱՑՈՒՄ ԺՈՂՈՎՈՅ

Նիստը տեղի ունեցաւ Ղալաթիոյ Խորհրդարանի մէջ եւ ժամը 3ին առեանք բացուեցաւ ի ներկայութեան 50 երեսփոխաններու, որոնց թիւը յետոյ յանգեցաւ 63ի:

ԱՏԵՆ. էֆ. — Այսօրուան նիստին տեղաբնական պատճառաւ կը բացաւ իր նիստը Ս. Մաղաքիա Արքեպս. Օրմանեան, Գարեգին էֆ. Տէմիրճիպաշեան, Միքայէլ քհնյ. Աշնեան եւ Յարութիւն էֆ. Մոստիքեան, կ'արձանագրենք զիրենք օրինաւոր բացակայ:



ՎԱԽԵՐԱՑՈՒՄՆ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ

ԱՏԵՆ. ԷՖ.— Անցեալ նստաշրջանի 23էն մինչեւ 26րդ նիստի ատենագրութիւնները ինչպէս նաեւ ներկայ նստաշրջանի 1էն մինչեւ 3րդ նիստի ատենագրութիւնը 2եր վաւերացման կ'ենթարկեմ: Անոնք որ դիտողութիւն ունին թող հաճին ընել:

(Ուեւէ դիտողութիւն չըլլալով, վաւերացան նոյն նիստի ատենագրութիւնները)

ՊԱՏՐԻԱՐԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

ԱՏԵՆ. ԷՖ.— Ինչպէս գիտէք Պատրիարքական ընտրութիւնը պիտի կատարուի յառաջիկայ ուրբաթ Մայր Եկեղեցւոյ մէջ: Համագումարի ցանկին վրայէն Բաղ. Ժողովը չորեքշաբթի օր իր հնդանուն ցանկը պէտք է պատրաստէ որպէս զի հինգշաբթի օր ատենապետաց զիւանը նիստ ընելով նկատողութեան առնէ զայն եւ ուրբաթ օր ի վիճակի ըլլանք Մայր Եկեղեցւոյ մէջ կատարելու պատրիարքական ընտրութիւնը: Այս առթիւ դիտել կուտամ որ զիւաններէ ոմանք տակաւին իրենց ատենապետները ընտրած չըլլալով, կամ ատենապետին ընտրեն կամ ներկայացուցիչ մը նշանակեն մասնակցելու համար ատենապետաց դիւանին:

Հ. ԽՕՃԱՍՍՐԵԱՆ ԷՖ.— Ներքին կանոնադրի այդ տրամադրութիւնը, չի համաձայնիր պատրիարքական ընտրութեան մասին սահմանադրական տրամադրութեանց, հետեւաբար անոր գործադրութիւնն ալ պարտաւորիչ չինք նկատելով, արդէն հաղիւ մէկ կամ երկու անգամ գործադրուած է այն:

Ա. ԱԼՊՈՅԱՃԵԱՆ ԷՖ.— Ճիշդ է, պէտք չկայ բնաւ ատենապետաց զիւանին նկատողութեան ենթարկելու պատրաստուած ցանկը:

ՀՐԱԺԱՐԱՆԱՆ Ս. ՊԱՏՐԻԱՐԿԻ

ԱՏԵՆ. ԷՖ.— Ինչպէս կը յիշեք, մեր պաշտօնակիցներէն Կոպեռնիկ Էֆ. Խաչատուրեան, ասկէ առաջ հարցում բրած էր թէ, Արշարունի Ս. ի կառավարութեան եւ Ազգ. Ժողովին մատուցած հրաժարական-

ներու մէջ տեսնուած տարբերութեան պատճառը ի՞նչ է, եւ Ազգ. Ժողովը որոշեց պահանջել կառավարութեան մատուցուած հրաժարագրին պատճէնը: Վարչութիւնը առանձին պաշտօնագրով մը խրկած ըլլալով մեզ այդ պատճէնը, Ժողովիդ ուշադրութեան կը յանձնեմ:

(Ատենագիր Էֆ. Կարդաց հետեւեալները).

Ազնուաշուք Ատենապետ Էֆէնտի Պատկաւելի Ազգ. Ընդհ. Ժողովոյ Պատկ. Ժողովդ ամսոյս 5 թուականաւ գրով մը հաղորդած էր Ազգ. Երեսիոյն Ազն. Կոպեռնիկ Էֆ. Խաչատուրեանի Օգոստ. 2 թուականաւ մէկ հարցագրին՝ որ կը վերաբերէր հրժ. Արշարունի Ս. Յովհաննէս Սրբազանի Բ. Դրան մատուցած հրաժարագրին՝ Պատկ. Ժողովոյդ մատուցած հրաժարագրէն տարբերութեան, եւ յանձնարարած էր յուղարկել անոր մէկ պատճէնն:

Ինչպէս Պատկ. Ժողովոյդ նախորդ նստին մէջ յայտարարուած է, Բ. Դրան մատուցուած այդ հրաժարագրին նախապէս անցած չէ Ժողովոյս բովէն, եւ հաւաստիկ ըստ յանձնարարութեան՝ կը մատուցանենք ընդ դրոյս նոյն հրաժարագրին թուրքերէն պատճէնը, եւ կը մընամք խորին յարգանքով:

Ի դիմաց Ազգ. Կեդր. Վարչ. Խառն Ժողովոյ

Քաղաքական Ժողովոյ

Ատենագիր Ատենապետ
Ա. Յ. Գաւալեան Գաւալեան

Կրօնական Ժողովոյ
Ատենագիր Վ. Ատենապետի

Երուանդ Վրդ. Մ. Յ. Տերուանեան

Բաթրիկի մէմուրիյէթինէ թայինիմ տէն պէրու, զիւս վէ իգթիտարըմ տէրէ-ճէսինտէ տէվլէթ վէ միլլէթիմէ իյֆաի հիւսնը խըտմէթէ սարֆը սայ վէ զայրէթ իթմիշ իսէմ տէ, արիզէի վիճուտիյէմ հասէպիլլէ մէհամը ումուրըն տէրքեար օլան միւ շքիլաթընա գարչը տէվամը վաղիֆէի տախանէմ գապիլ օլամայաճաղըն-տան իշտէն չէքիլէրէք տէվլէթ վէ միւ-

լէթիմին սաատէթ վէ սէլամէթի տուա-սըլլա մէշըուլ օլմագ իւզրէ մէմուրիյէթը մէզքիւրէտէն իսթիֆաի տախանէմին խա-քիւրաի չէվլէթ ինթիվաի հաղրէթը բա-տիշահիյէ արզը խուսուսընա տէլալէթը ալիյէի նէզարէթէնահիլէրինին շայան պուլըլմասընը իսթիւրհամ իտէրիմ:

Պատրիարքական պաշտօնին կոչուած օրէս ի վեր, կարողութեանս սահմանին մէջ աշխատած եմ կառավարութեան եւ Ազգիւս բարեք ծառայութիւն մատուցա-նելու: Այլ սակայն, գործոց ծանօթ դը-ժուարութեան պատճառաւ, առողջական տեսակէտով անկարելի ըլլալով պաշտօնիս շարունակութիւնը, կը քաշուիմ անկէ, կառավարութեան եւ ազգիւս երջանկու-թեան եւ բարօրութեան աղօթելու համար, կը խնդրեմ որ հաճիք Պատրիարքական պաշտօնէ սոյն հրաժարականս ներկայացնել վեհափառ Կայսեր:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ.— Կարգացուած հրաժարագրէն կը հասկցուի որ, Արշա-րունի Արքեպս. նախ Ռոտոսթոյի պարա-րունի Արքեպս. նախ Ռոտոսթոյի պարա-րունի չէ յիշած իր հրաժարագրին մէջ եւ գտն չէ յիշած իր հրաժարագրին մէջ եւ երկրորդ ուղղակի մատուցած է զայն կա-ռավարութեան, առանց տեղեկութիւն տա-լու Վարչութեան: Ասոնք գուցէ շատ ան-միշ գործեր են, տեղի ունեցած ուրիշ սխալներու քով, հետեւաբար աւելորդ կը նկատեմ այս մասին վիճաբանութիւնը եր-կարել, եւ կ'առաջարկեմ արձանագրելով բաւականանալ:

Վ. ԹԷԲԷԱՆ ԷՖ.— Ես կը կարծեմ որ ազգին եւ կառավարութեան մատուց-ուած հրաժարականները բառ առ բառ նոյ-նը պէտք է ըլլան: Որովհետեւ երբ այս Ժողովը ընդունեց Արշարունի Ս. ի հրա-ժարականը ծանօթ բանաձեւով, իր հրա-ժարագրին մէջ գործածած բառերը ազգե-ցութիւն մը ըլին մեր վրայ: Հետեւաբար այդ հրաժարագրը պիտի մատուցուէր այնպէս ինչպէս որ գրուած է ու ամենա-թեթեւ փոփոխութիւն մը իսկ ներկի չէր, հաստատուելու համար որ իր պատճառա-բանութիւնը միայն ազգին համար չէր

այլ եւ կառավարութեան համար: Այս Դը-կատումով պէտք չէ թեթեւ բան մը նը-կատենք պատահածը:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ.— Ես առաջար-կեցի փակել խնդիրը, համեմատելով եղա-ծը անոնց հետ, որոց առջեւ լռեց այս Ժողովը:

Վ. ԹԷԲԷԱՆ ԷՖ.— Ես պէտք կ'ըզ-գամ որ հրաժարեալ Պատրիարքը հոս պար-զէ իր դիտաւորութիւնը, որպէս զի Ժո-ղովս համոզուեմ գոյացնէ թէ յետին մըտ-քերով եղած գործ մը չէ ասիկայ: Այս Ժողովը ցաւով ընդունեց մատուցուած հրաժարականը, բայց եթէ գիտնար թէ այս կերպ գործողութիւններով տրուած է բնականաբար ընդունելութեան ձեւը տարբեր պիտի ըլլար, ես պէտք կ'ըզգամ որ Ժողովը արտայայտուի այս մասին, յառաջիկային օրինակ ըլլալու համար:

Ե. ՊԵՅԱՉՃԵԱՆ ԷՖ.— Յարգելի բա-նախօսին համամիտ չեմ, եւ չեմ ալ կրնար ընդունիլ թէ հրաժարագրին մէջ եղած այս տարբերութիւնը յետին միտքի մը ար-դիւնք է: Արշարունի Սրբազան, որ ի հարկին այնքան ազգու կերպով բողոքած էր ազգին զանազան ցաւերուն համար՝ չեմ կրնար հաւատալ թէ իր հրաժարա-գրին մէջ ու եւ է յետին միտք գրած ըլլալ-ընդհակառակը կը տեսնեմ որ թուրքերէն գրուածն ալ հայերէնի իմաստն ունի գրե-թէ, ու միակ Ռոտոսթոյի դէպքն է որ չէ յիշուած: Ես համոզուած եմ որ հրաժար-եալ Պատրիարքը յօգուտ ազգին շարժե-ցաւ իր պաշտօնավարութեան շրջանին մէջ:

Դ. ՏԷՐ ՄՈՎՍԷՍԵԱՆ ԷՖ.— Պատ-րիարքի հրաժարականը ինծի համար քա-ղաքական խնդիր մըն է, եւ այս քաղա-քականութեան մէջ պէտք չէ որ կեղծիք ըլլայ որովհետեւ Պատրիարքին քաղաքա-կանութիւնը պիտի ըլլայ այն ինչ որ է ազգինը, ազգը վարող պետերը մէկ քա-ղաքականութիւն միայն պիտի ունենան զաքականութիւն միայն պիտի չեն իրենց, որ տարբեր կեր-պով խորհին եւ տարբեր վերաբերում ու-

նենան. երբ Պատրիարք մը, որ ազգին մէջ ամենէն բարձր պաշտօնի կոչուող եկեղեցականն է, կուգայ եւ կ'ըսէ թէ՝ այն ինչ պատճառաւ ես չ'ամ կրնար իմ պաշտօնս շարունակել պարտաւոր է ճիշտ միեւնոյն պատճառը երթալ եւ ըսել կառավարութեան՝ աւելցնելով միանգամայն որ նոյն պատճառին համար կը հրաժարի իր պաշտօնէն, մինչդեռ՝ Արշարունի Սրբազան տարբեր ընթացք մը ցոյց կուտայ. մէկ կողմէն գործերու ընդհանուր վիճակը շարժառիթ ներկայացնելով հրաժարականին, միւս կողմէ Ռոտոսթոյի անցքերը մատնանիչ ընելով, ասիկա ես քօրէքթ ուղղութիւն մը չեմ կրնար սեպել, որովհետեւ, այլ եւս գործը կեղծիքի սահմանին մէջ կը մտնէ այսպէսով, հետեւաբար պէտք է այս ժողովը արտայայտուի, եւ գոնէ ապագայի տեսակէտով ցաւ յայտնէ այս պատահածին համար եւ այնպէս արձանագրէ:

Վ. ՍԵՐԵՆԿԻԻԼԷԱՆ ԷՖ.— Ես այս հրաժարագրին մէջ կեղծիք ըլլալու բան մը չեմ տեսնար, բայց պէտք կը զգամ քօրէքթ ըլլալու հրաւեր ուղղել այն երեսփոխաններուն, որոնք Արշարունի Պատրիարքը հրաժարելու հարկադրեցին, Պատրիարք մը իր պաշտօնէն հեռացնելու եղանակը այն չէր՝ ինչ որ գործադրուեցաւ. կամ պէտք էր որ, Պատրիարքը ինքնաբերաբար ըսէր թէ անկարող կը զգայ ինքզինքը իր պաշտօնը շարունակելու, եւ կամ պէտք էր ժողովը որոշապէս արտայայտուէր թէ դժգոհ է իր գործունէութենէն եւ աշխատութենէն, բայց այս Պատր. հրաժարականը այդ պայմաններուն մէջ տեղի չունեցաւ, Արշարունի Սրբազան ինքզինք կարող կը զգայ իր պաշտօնը շարունակելու, եւ միւս կողմէ մենք՝ առանց ըսելու թէ անվստահութիւն ունինք իր մասին՝ կողմնակի միջոցներով պարտաւորեցինք զինք հրաժարելու, այն առարկութեամբ որ իր ջղային գրութիւնը փնտրածէ աշխատութեան պատճառաւ եւն: Արշարունի Սրբազան ընդունեց իրեն եղած առաջարկութիւնը եւ ստորագրեց հրաժարականը. ամբողջ իրողութիւնը այս է, որուն մէջ մեր պաշտօնակիցներէ ումանց փնտրած քօրէքթ ընթացքը ես չեմ տեսնար, հետեւաբար, կառավարկեմ փակել այս վիճարանութիւնը, վերջացած նկատելով այս խնդիրը:

Ժ. ՍՍՅԱՊԱԼԵԱՆ ԷՖ.— Կը զարմանամ որ այս ժողովը Արշարունի Սրբազանի հրաժարականը իրեն պարզ ընդունելէ յետոյ պատճառաբանութեանց վրայ կը խօսի, եթէ հրաժարեալ Պատրիարքը այս ժողովին ներկայացուցած ձեւով Բ. Դրան մատուցանէր իր հրաժարականը, տարակոյս չկայ որ պատճառաբանութիւն պիտի նկատուէր ասիկա եւ չպիտի ընդունուէր կառավարութիւնէն, ու այդ պարագային առաջ պիտի դար նոր խնդիր մը որ ժողովին համար նոր դժուարութեանց առիթ պիտի դառնար. հետեւաբար արգելքի տեսակէտով Բ. Դրան տրուած հրաժարագրին այդ կերպով խմբագրութիւնը եւս դատապարտելի չեմ գտնիր:

ՍՄԲԱՏ ԲԻԻՐՍԷՍ ԷՖ.— Այս ժողովը ցաւով ընդունեց Արշարունի Սրբազանին հրաժարականը, որովհետեւ ան իր պաշտօնավարութեան ընթացքին մէջ, ազգային շահերու պաշտպանութեան նախանձախնդրութիւն ցոյց տուաւ: Երեսփոխաններէ ումանք, խնդիր կընեն հիմա իր հրաժարականը, թէ եւ միւս Բ. Դրան մատուցած հրաժարագրին մէջ գործող ընդհանուր ընթացքին վրայ ակնարկութիւն մը կայ. եթէ հրաժարականին բուն պատճառները քննուին, պիտի տեսնուի որ իրմէն պահանջուածն ալ պարզ հրաժարական մընէ մինչդեռ մեր ակնարկած ձեւով հրաժարական մը՝ կրնար նոր դժուարութիւններու առիթ ալ. եզրակացնելով՝ կըսեմ որ, ժողովին համար փակուած է այս խնդիրը, եւ հետեւաբար, անպատշաճ կը նկատեմ այս վիճարանութեան շարունակութիւնը:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ.— Եթէ խնդիրը այդ կերպով պաշտպանուի, կարծեմ թէ մի մեծ սխալ կը գործուի, ես ինքզինք

քիս չեմ ներեր արգարացնել իրողութիւնները ծածկելը որ առաքինութիւն մը չէ. անկարող մարդ մը չըզգար թէ ինք անկարողէ, ժողովը իրեն մէջ զժողովութեան շուրջներ սկսած էին արդէն, երբ մտածուեցաւ առանց վէճի տեղի տալու՝ հրաւիրել որ Պատրիարքը հիւանդութեան պատճառով հրաժարական տայ: Արշարունի Սրբազան խոստացաւ, սակայն վերջին պահուն ներկայացուց պատճառաբանեալ հրաժարական մը, որ զարմացուց մեզի, ժողովը այս պարագան նկատելով եւ հրաժարականն ոչ պատճառաբանեալ համարելով այդ կերպով անցաւ վրայէն որովհետեւ Պատրիարքի հեռանալուն կը ցանկանար, այս է ահա ասիկ իրողութիւնը, Արշարունի Սրբազանի առաջարկութիւնը պարզ հրաժարական մը տալ է, կուածը պարզ հրաժարական մը տալ է, հետեւաբար, այդ կերպով տրուած հրաժարական մը ոչինչ ունի իր մէջ դատապարտելի. գալով այն պարագային՝ թէ Պատրիարքական հրաժարականները այս ժողովէն ընդունուելէն յետոյ է որ պիտի ներկայացուին կառավարութեան, ընկալեալ մասին ու եւ մի սովորութեան մէջ այդ մասին ու եւ հիմա հետք չկայ: Հետեւաբար այդ ձեւը գործադրուած չէ մինչեւ այսօր:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ժողովը այս պահուն մեծամասնութիւն ունի. կուգէ որ շարունակուի այս վիճարանութիւնը թէ մեծամասնութենէն օգտուելով անցնինք օրակարգի:

Վ. ԹԵՔԵՆԵԱՆ ԷՖ.— Այս վիճարանութիւնը՝ աղբիւն օգտին համար կատաւորեցաւ այլեւս երկարելու պէտք չկայ, մեր նպատակը ինչ որ էր բացառուեցաւ արդէն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ուրեմն վիճարանութիւնը փակուած է:

Ս. ԳԱՐԱՅԵԱՆ ԷՖ.— Բազ. ժողովոյ անդամներէն երկուքը վերջնականապէս հրաժարած են, քանիցս ջանացինք համոզել զիրենք ետ առնել տալու համար իրենց հրաժարականները, բայց կարելի չեղաւ, հետեւաբար, կը խնդրենք որ այդ

երկու անդամին ընտրութիւնը անմիջապէս կատարուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Այսօր կարելի չէ այդ ընտրութիւնը կատարել յառաջիկայ նիստին օրակարգը կ'անցնի ըստ օրինի:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԿԱՆՈՆԱԳՐԻ ԽՆԴԻՐԸ

Պատգամաւոր Ազգային Վարչութեան

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Վարչութեան կողմէ պաշտօնագիր մը կայ՝ Երուսաղէմի կանոնագրին մէկ քանի յօդուածներուն անմիջական վաւերացման համար. Ձեր ուշադրութեան կը յանձնեմ այդ գիրը: (Ատենադպիր ԷՖ. կարդաց հետեւեալ պաշտօնագիրը):

Ազնուաշուք Ատենապետ Էֆէնտի

Ազգ. Պատկ. Ընդհանուր Ժողովոյ

Պատկառելի Ժողովը՝ նախորդ ամսոյ 19ին մեր մատուցած յայտագրին վրայ՝ հաճած է իր օրակարգն անցունել Երուսաղէմայ Ս. Յակովբեանց վանքին հիմնական կանոնագրի նախագծին քննութիւնն՝ որ տակաւին աւարտած չէ:

Դժբախտաբար՝ նոյն Մայրավանքին գործերն կը շարունակուին միայն այն վատթար վիճակին մէջ, որ արդէն պարզուած է մեր նոյն գրով. եւ անոր մէկ կարկառուն ապացոյցը կը ներկայացունէ Միաբանական Ընդհ. Ժողովոյ կողմանէ Տ. Եղիշէ եպս. Չիլիկիւրեանի Օգոստ. 10 թուականաւ ուղղած պաշտօնական մէկ հեռագրին՝ վանքին անշարժ սեպակաւութեանց թանհիմն գայտի գործողութեանց մասին, որու կարեւորութիւնն եւ ստիպողութիւնն ինքնին չկարօտիր բացատրութեանց:

Հետեւաբար, Ազգ. Կեդր. Վարչութեան Խառն Ժողովոյ որոշմամբ՝ կը խընդրենք Պատկ. Ժողովէն՝ ստիպողութիւն տալ նոյն կանոնագրի ծրագրին քննութեան եւ ժամ առաջ աւարտել զայն, եւ կամ մեր Յուլիս 19ի գրով նշանակուած երեք յօդուածները քուէարկելով նուիրագործել, որպէսզի կարելի ըլլայ այլեւս վերջ մը տալ վանքին արդի անկերպարան վիճակին:

Պատրիարքական ընտրութեան այս անհրաժեշտ հարկին առջեւ, կառավարիչներ որ յառաջիկայ ուրբաթ Պօսոյ Պատրիարքի ընտրութեան հետ կատարուի նաեւ Երուսաղէմի Պատրիարքական ընտրութիւնը:

Մնաք յարգանք

Յակոբ Նաւեան 3. Կ. Ճանկիւլեան
23 Օգոստ. 1913

3. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ. — Կարգացուած այս գիրը վիճաբանութեան առարկայ եղած խնդրոց հետ ո եւ է կապ չունենալով՝ այդ մասին կարծիք յայտնել աւելորդ կը նկատեմ, զայով Վարչութեան առաջարկին, կը խորհիմ որ Երուսաղէմի ցաւը դարմանելու համար Ժողովս պէտք է միջոց մը գտնէ, Վարչութիւնը իր մէջ բաւարարութիւն չգտար հարկ դատած միջոցները գործադրելու՝ առարկելով որ, այն Մարմինները՝ որոց կազմութեան հարկ կը զգայ՝ անոնց կազմութիւնը պէտք է օրէնքի կարգ անցած ըլլայ, որպէս զի, անոնք ալ իրենց մէջ կարողութիւն զգան գործելու՝ պահանջուած կորովով: Կը մնայ այս Ժողովին այս բոլորիս իր վարչական յարմար դատած եղանակով կարգադրութիւն մը ընել, իսկ եթէ՝ չարտայայտուի Ժողովը՝ գուցէ ամիսներ տեւէ ներկայ վիճակին շարունակութիւնը, եւ անոնք որ կը ցանկան ներկայ վիճակին մէջ պահել վանքը, բնականաբար, կանոնադրին ընդհանուր քննութեան կը թողուն այս անմիջական պէտքերու իրականացումը, Ժողովը այս մասին իր որոշումը տալէ յետոյ, իրաւունք ունի Վարչութեան առաջարկութեան վրայ՝ կանոնադրին յարմար դատած գլուխին առաջնութիւն տալ:

Դ. ՏԵՐ-ՄՈՎՍԵՍԵԱՆ ԷՖ. — Քիչ առաջ պարզեցի այն պատճառները որոնք կը պարտաւորեն մեզի կանոնադրին քննութիւնը ծայրէն սկսելու, հակառակ ընթացք մը տրամաբանական չպիտի ըլլար. զայով Վարչութեան ինք արգիւտած չէ, այժմէն կազմելու այնպիսի յանձնախումբեր, որոնք մատակարարական գործոց վերին հսկողութիւնը պիտի կատարէին եւ

աշխատութեան պիտի սկսէին, ասոր համար ես պէտք չեմ տեսներ ընդունուած կարգերը փոխելու եւ զարտուղութիւններ ընելու:

Զ. ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ ԷՖ. — Կանոնադրը արդէն յանձնաժողովոյ կողմէ պատրաստուած եւ վերջացած է. հետեւաբար, Երուսաղէմի մասին քննութիւնը աւելի առաջ կատարուելուն մէջ ո եւ է անտեղութիւն չենք տեսներ, մանաւանդ որ Վարչութիւնը տեսակ մը պատուոյ խնդիր կը յարուցանէ այս կերպով. հետեւաբար Ժողովիս կողմանէ իրեն ընդհանուր սկզբունքի խնդիր համակերպութեան կողմն եմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երեսփոխաններէ մասնց կողմէ եղած առաջարկութեան վրայ վերստին ձեր քուէին կը դիմեմ որոշելու համար թէ կանոնադրին առաջին յօդուածէն քննութիւնը շարունակելու պայմանաւ, կ'ուզէ՞ք նախապատուութիւն տալ Վարչութեան ներկայացուցած մատակարարական երեք յօդուածներուն (Ժողովը ձեռամբարձ հաւանութեամբ եւ 20 քուէով որոշեց առաջնութիւն տալ այդ երեք յօդուածներու քուէարկութեան):

Դ. ՏԵՐ-ՄՈՎՍԵՍԵԱՆ ԷՖ. — Կը բողոքեմ այս քուէարկութեան դէմ, եւ կը պահանջեմ որ արձանագրուի:

Վ. ԹԷԿԵԱՆ ԷՖ. — Արդէն եթէ ուրոյն ուրոյն յօդուածներ պիտի քուէարկուին, օրինակի համար, ատենցմէ մէկն է չորրորդ յօդուածը. հոն յիշատակուած է կազմակերպիչ յանձնաժողով մը, որուն ոչ պաշտօնը դիտենք եւ ոչ ալ կազմութեան վրայ գաղափար ունինք:

3. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ. — Խորհրդարանական յանձնաժողովը կազմակերպիչ յանձնաժողովի մը կազմութեանը հարկ տեսաւ, այն պատճառաւ որ եթէ մի տեղ մէկը պիտի ընտրուի եւ վիճակ մը պիտի ստեղծուի. հոն կազմակերպիչ մի տարրի պէտք կայ. այս մարմինը, այս կազմակերպիչ տարրը կամ Ընդհանուր Ժողովէն կը բղխի, կամ Վարչութիւնը ինք կը կազմա-

կերպէ եւ հեղինակութիւն կուտայ անոր գործելու. այդ կազմակերպիչ մարմինը ժամանակաւոր մի բան է, եւ օրէնքին մէջ առանձին մարմնոյ կարգ չանցնիր. ասիկա սխառ էր կազմութեան խնդիր է, եւ այդ նպատակաւ դրուած է:

(Ատենագիր էՖ. կարգաց կանոնադրին հետեւեալ չորրորդ յօդուածը).

Յօդ. 4. — Միաբանութեան անդամներուն ընտրելութեան պայմաններն են,

Ա. 21 տարեքը լրացուցած.

Բ. Ֆիզիքական առողջութիւնը բժշկական վկայականով հաստատուած,

Գ. Անուանին միջնակարգ կրթութիւն ստացած.

Դ. Ամբասիր վարքը ազգ. պաշտօնական մարմնէ մը վկայուած ըլլալ:

Առժամեայ տրամադրութիւն. — Ներկայ միաբանական անդամներէն սոյն պայմանները չլրացնողներու տեղ՝ նոր անդամներ ընտրութիւնը պիտի կատարուի Ազգ. կեդր. Վարչութեան կազմակերպիչ յանձնաժողովի ձեռքով, որուն կազմութիւնը պիտի որոշուի վարչական տնօրինութեամբ:

Տ. ՎԱՀՐԱՄ Ս. ԱՐՔ. ՄԱՆԿՈՒՆԻ. — Ես կ'ուզէի շատ երկար խօսիլ այս խնդրոյ մասին, բայց որովհետեւ Ժողովը սկիզբէն ընդունեց է հիմնական սկզբունքները եւ հիմայ մանրամասնութեանց վրայ է որ կը խօսուի, ինչ որ այս յօդուածները կը թելադրեն մեզի՝ այն պիտի խօսիմ. արդէն այս յօդուածները շատ խոտոր կերպով կը համեմատին իրարու հետ, օրինակի համար չորրորդ յօդուածին առժամեայ տրամադրութեան մէջ. ներկայ միաբաններու փոփոխման եւ նոր անդամներու անուանման մասին խօսքեր կան, որոնցմէ կարելի չէ հասկնալ թէ ինչ պիտի ըլլայ Պատրիարքին դերը, միաբաններու դատման եւ անուանման խնդրին մէջ. Պատրիարքին ո եւ է դեր չէ տրուած այս գործերուն մէջ. դարձեալ միաբանները այստեղէն թէ Երուսաղէմի բնակիչներէն պիտի ըլլան, որոնք պիտի որոշեն այս միաբանները, ատենք ամէնքը վաղական ընդհանուր կարգին ու կանոնին անձա-

պէս պատասխանատու եղող Պատրիարքը կ'իջեցնեն ստոր վիճակի մը, ինչ որ պատիւ չի բերեր մեզ եւ Երուսաղէմի որ առաջ հիմնադրուած ընելու կը ծառայէ, ես կը խօսիմ ատենք եկեղեցական եւ վանական գործոց մէջ իմ ձեռք բերած փորձառութեամբս, մանաւանդ Երուսաղէմի մէջ տեսածներովս, կայսերական հրովարտական եւ կառավարական ուժով պատրիարքական աթոռի վրայ գտնուող եկեղեցական մը, այսպիսի զեղչեալ իրողութիւններով չլինար գործել. պէտք է իշխանութիւնը Պատրիարքի ձեռքին մէջ գտնուի, ու մենք աշխատինք միայն կարող ու վստահելի մէկը կոչել պատրիարքական աթոռը. եթէ Պատրիարքը իր շուրջ գտնուած ժողովներուն որոշմանց այս կերպով գործադիրը պիտի ըլլայ, ասիկա Պատրիարքական իշխանութիւնը կ'ոչնչացնէ Երուսաղէմի մէջ. այս կէտը ձեր մասնաւոր ուշադրութեան կը յանձնեմ:

Գ. ԱՐՍԼԱՆԵԱՆ ԷՖ. — Ժողովս նախապէս որոշեց կանոնադրին սկիզբէն սկսիլ վիճաբանութեան, ի վերջոյ վարչութեան անդամոց առաջարկին վրայ երեք յօդուածներու քննութեան նախապատուութիւն տրուեցաւ, եւ չորրորդ յօդուածի քննութիւնն ալ սկսաւ, բայց ես կը կարծեմ թէ նոյն իսկ այս ձեռով դարձեալ ժամանակի կորուստ առաջ պիտի գայ. երթադրելով նոյն իսկ որ այս յօդուածները այսօր քուէարկուին, արդեօք կարող պիտի ըլլա՞նք անմիջապէս գործադրութեան դնելու եւ արգիւնք մը առաջ բերելու. ով դիտէ ինչ նոր գծուածութիւններ պիտի ծագին՝ տարի մը պիտի շարունակուի խնդիրը, բայց վաղեմի համար կրտսի թէ անմիջական դարման պէտք է եւ կարող չէ աշխատակալութեան, մենք այս կանոնադրը քննելով եւ քուէարկելով զբաղած ատեն կառավարիչմ ձեռնհաս եւ կարող եկեղեցական մը զրկել Երուսաղէմ, որ կառավարէ վանքը, թերեւս մենք ալ տարի մը շարունակենք այս տեղ կանոնադրին վիճաբանութիւնը:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ ԷՖ. — Քանի որ յօդուածներու վրայ է վիճաբանութիւնը, ես

չառ սքանչելի կը գտնեմ չորրորդ յօդուածի առժամեայ տրամադրութեան գիւտը. այս այնպիսի յօդուած մըն է որ, իրաւունք կուտայ Պոլսէն կազմակերպիչ Յանձնաժողով անուանով մարմին մը զրկելու որ, միաբաններուն ձեռքէն բռնելով դուն ամբաստանուած ես դուն գող ես, դուն ֆիզիքական կրթութիւն չունիս դուն ամբաստիւ վարք չունիս ըսելով մի առ մի դուրս հանէ եւ այն ատեն չէնքին վրայ պիտի գրուի մեզօք ճեք, ինչպէս ըրաւ ժամանակին անգլ. վարչապետ Գրովիլէյ, որ մէկ մէկ առարկութեամբ երեսփոխանները ցրուեց եւ խորհրդարանին վրայ ալ վարձու շեմք վերադառնալով թուղթ մը փակցուց, եթէ այսպիսի մտադրութեամբ պատրաստուած է այս յօդուածը եւ չառ սքանչելի կը գտնեմ:

Վ. ՍԵՐԵՆԿԻԻԼԵԱՆ ԷՖ.— Հոն ապականած մարդեր կան, ազգին իրաւունքն է զանոնք մաքրել իր ծոցէն:

Տ. ՎԱՀՐԱՄ Ս. ՄԱՆԿՈՒՆԻ.— Հոն պատուական մարդեր ալ կան, այդ ոճով մի անուանարկէք ամէնքը: Այս ուղղութիւնը վանքը գողցելու ուղղութիւն է, մենք բարեկարգութեան կողմն ենք:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ.— Քանի որ վիճաբանութիւն պիտի կատարուի Կրդ յօդուածի բովանդակութեան վրայ՝ պէտք է թոյլ տալ որ ոչ մի երեսփոխան նիւթէն դուրս չեւ է խնդրոյ վրայ խօսի: Այս յօդուածի կարեւոր մէկ մասը արդէն երուսաղէմի նախկին կանոնադրութիւններէն առնուած է եւ յանձնաժողով մըն առնուած է եւ յանձնաժողով մըն առնուած է միտք չէ ունեցած, ինչպէս կականարկուի, երուսաղէմի ամբողջ միաբանները դուրս հանել: Միաբանութեան կազմութեան գործը մեր զբաղումներու ամենէն յետինն է, սակայն, մեր նպատակը այն է որ այդ կարեւոր գործը չգրուի այնպիսի մարդոց ձեռք որ չարիքի պատճառ չըլլայ:

Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ ԷՖ.— Եթէ գլխաւոր դիտողութիւնները չորրորդ յօդուածի յարակից առժամեայ տրամադրութեան համարէ, այդ յօդուածը կրնայ վերնալ:

Քանի որ իբրեւ առժամեայ տրամադրութիւն գրուած է, ինչպէս կերեւայ՝ թիւրիմացութիւն մը կայ այս խնդրոյն շուրջ. Վարչութեան համար օրէնքի ուժ ստացող հեղինակութիւն կարեւոր է. առոր սկզբունքը թող այս ժողովը քուէարկէ:

Ս. ԳԱՐԱՅԵԱՆ ԷՖ.— Որովհետեւ կը տեսնենք որ ժողովը մեր յիշած երեք յօդուածները քուէարկելու ձեռնարկեց՝ պէտք կը զգամ բերանացի քանի մը լուսարանութիւններ հաղորդել թէ՛ ինչ պատճառներով այս երեք յօդուածներուն քուէարկութեան ստիպողութիւն տուինք: Երբ երուսաղէմի խնդրը Վարչութեան սեղանին վրայ եկաւ՝ բարեկարգական միջոցներու ձեռնարկելէ առաջ՝ տեսնեք որ երեք հիմնական սկզբունքներ քուէարկած է Ազգ. ժողովը, բայց ատոնց մանրամասնութիւններուն վրայ խօսուած պահուն, կարծեաց փոխանակութիւններ տեղի ունեցան թէ կրնային զանազան վտանգներ պատահի, որոնք Վարչութիւնը չի կրնար կանխատեսել այժմէն՝ բայց կը դիտէ որ չի կրնար բարեկարգական միջոցներու ձեռք զարնել, քանի որ կանոնադրող մեծ արգելք մը գրելու է. այս կամ այն Մարմիններով գործելու համար, հետեւաբար համոզում գոյացուցինք որ Ազգ. ժողովը մեզի արտօնութիւն պէտք է տայ, չէ թէ օրինագիծը նոյնութեամբ գործադրելու, այլ այդ Մարմիններու կազմութեան վերաբերեալ պայմանները ճշտելու, այս մտքով է անա որ դիմեցինք այս ժողովին, հետեւաբար դիտել կուտամ որ մեր տեսակէտը չօչափող յօդուածները աւելի 32 եւ 36րդ յօդուածներն են, քանի որ ամբողջ ազգն ալ այս մարմիններուն ժամ առաջ գործի ձեռնարկելուն կը սպասէ:

Տ. ԵՂԻՇԷ ԱՐՔ. ԴՈՒՐԵԱՆ.— Վարչութեան մէջ կը գտնուէի երբ պաշտօնապէս ես ալ ստորագրեցի ներկայացած առաջարկութիւնը, բայց կը տեսնեմ որ կանոնադրին մէջ երբ պայման կը դրուի 21 տարին լրացուցած միաբաններ միայն ընդունիլ՝ դժուարութիւններ կը ներկայանան աչքիս. մեր մասնաւոր ջանքը

պիտի ըլլայ, ժառանգաւորաց վարժարանը դնել այնպիսի վիճակի մէջ որ վանքին յատուկ միաբանը վարժարանը պատրաստէ, փոխանակ դուրսէն 21 տարին լրացուցած անձեր գտնելու եւ բերելու միաբանութեան մէջ դնելու. կ'առաջարկեմ նոյնպէս ջնջել առժամեայ տրամադրութիւնը, քանի որ այդպիսի կասկածանքներու անդի կուտայ. եւ քանի որ արդէն այդ տրամադրութիւնն ալ առժամեայ կայ է չարժեք այս մասին պնդել, եւ ուրիշ կարեւոր կէտեր նկատողութեան առնել աւելի յարմար կ'ըլլայ:

Հ. ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ ԷՖ.— Չորրորդ յօդուածը 1880ի կանոնադրին մէջ նոյնութեամբ գրուած է, հոն յիշատակուած է որ արդէն միաբանին տարիքը 20էն պակաս չըլլայ, ֆիզիքական առողջութիւն պիտի ունենայ, միջնակարգ ոչ թէ երկրորդական կրթութիւն ստացած պիտի ըլլայ: Իսկ յաւելուածական տրամադրութիւնը որ գրուած է կարգ մը այնպիսիներու համար, որոնք զանազան անհաւատարմութիւններով եւ սրբապղծութիւններով իրենց անունը արատաւորած են՝ անագին վախերու առիթ կուտայ. ճիշտ է որ, եթէ որ մը երուսաղէմ երթանք մաքրագործութեան համար՝ ձիթենիներով եւ դալիններով չպիտի երթանք եւ անոնք որ մինչեւ հիմայ քննադատելի կեանք ու վիճակ ունեցան չպիտի կրնան ապրիլ հոն ու ազգը վերջ պիտի տայ այլ եւս անոնց ընդ հեղինակութեան: Այսպիսի մաքրագործում մը անոնք դուրս պիտի ընէ վանքէն եւ մենք ալ կ'ուզենք որ վերջ դրուի այն վիճակին որ տեսական ախտի մը ձեւը ստացաւ այլ եւս. երուսաղէմի մէջ ազգը ներկայացնելու հեղինակութիւնը ունեցողները 40,000 ոսկիի բարձրացուցին ազգին պարտքը, այս մենք չէ որ ըրինք, մենք այս վիճակին դարմանը գտնելու կոչուած ենք. յօդուածին այդ մասը այս մտքը դրուած է:

Դ. ՏԵՐ-ՄՈՎՍԷՍԵԱՆ ԷՖ.— Եթէ կանոնադրող ընդհանուր կերպով կարդացած ըլլայիք, պիտի տեսնէիք որ բոլոր պաշտօնեաները նախատեսուած են հոն, առանց մի մանք պիտի յանձնուին կարող եւ ձեռնհաս եկեղեցականներու, հետեւաբար վանքը եւ միաբանութիւնը ցրուելու համար յայտնուած վախերը անտեղի եւ աւելորդ են բոլորովին, եւ հետապնդուած նըպատակէն հեռու, Պատրիարքի իշխանութեան

թեան անտես մնացած ըլլալու մասին եղած դիտողութիւններն ալ ճիշտ են, այդ յօդուածը օրէնսդրական մաքուր գրուած է, եւ օրէնսդիրը պարագ կը նկատէ աթոռ, իսկ եթէ կեդրոնէն Պատրիարքը ընտրուած է, անշուշտ պիտի գործակցի կազմակերպիչ Յանձնաժողովին, ասիկա, ոչ ոսկանկոխութիւն է, ոչ անտեսում: Պատրիարքի նշանակութիւնը նկատողութեան առնուած է. ինչպէս անցեալին նոյնպէս այսօր նոր կազմուելիք միաբանութեան համար, մենք կ'ըմբռնենք՝ 70 հոգի այսօր դուրսիւն չունի վանքին մէջ, այլ 30-40 միաբան միայն կայ. կազմակերպիչ Յանձնաժողովը տեղին վրայ պիտի երթայ՝ եւ միաբանական զանազան կարգերու թիւը պիտի ամբողջացնէ, իսկ դոնէ միջակարգ ուսումնէ դուրս գտնուողներ բնականաբար միաբանութեան էական մէկ պայմանը չեն կրնար լրացնել:

Տ. ԵՂԻՇԷ ԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ.— Այս կերպով վանքը պիտի վտանգուի:

Վ. ՍԵՐԵՆԿԻԻԼԵԱՆ ԷՖ.— Դուրեան Սրբազան չառ ներողամտութեամբ վաւերիլ կուզէ երուսաղէմի միաբանութեան նկատմամբ, որ նոյն իսկ ուխտի համար երուսաղէմ գացող բարեպաշտ ժողովուրդին գայթակղութեանց առիթ տուած է իր ագէտ վիճակին մէջ, ոտքի տակ առնելով ամէն կարգ ու կանոն եւ անիրաւութիւններ ու զեղծումներ գործելով: արդ, անոնք որ, առաջարկուած այս միջոցներուն դէմ քննադատութիւններ կ'ընեն, պիտի ուզենք գիտնալ թէ իրենք ի՞նչ միջոց կը խորհին այս վիճակին կանոնաւորման համար...

Տ. ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ (ընդմիջելով).— Ես իբրեւ երեսփոխան խօսեցայ ոչ թէ իբրեւ եկեղեցական:

Վ. ՍԵՐԵՆԿԻԻԼԵԱՆ (չարունակելով).— Պարտաւորութիւն եւ անհրաժեշտութիւն մընէ որ ազգին մէջ իբրեւ ազգուկ գործող այս միաբանութեան դէմ ազգովին ձեռք առնուելիք այս միջոցներուն համար այս կարգի յայտարարութիւններ չըլլան, անոնց կողմէ մանաւանդ որոնք փափաքող չեն այս վիճակին տեսականութեան. ասոնք ազգին արիւնը կը ծծեն այսքան տարիներէ ի վեր եւ չորրորդ յօդուածի յաւելուածական տրամադրութիւնը ուղղակի այդ կարգի մարդոց դէմ է գացէք կաթոլիկ վանքերն ալ աչքէ անցուցէք, ու եւ զարգացում չունեցող մէկը ինչո՞ւ

համար անոնք չեն ընդունիր իրենց վանքերուն մէջ. միջնակարգ կրթութիւնը չա՛մ մեծ բան է որուն դէմ կը խօսին, ուրեմն մեր վանականները, միայն հաց պէտք է ուտեն եւ փորերնին մեծցնեն 35-40 տարեկան միաբաններ կան՝ որոնք կանոնաւոր ալ չեն կրնար կարգալ. հետեւաբար ես յանձնաժողովոյ առաջարկը չնորհակալութեամբ կընդունիմ եւ միջոց մը կը նկատեմ պնակալէղները մաքրելու:

Մ. ԿԻՒՐՃԵԱՆ ԷՖ.— Չորրորդ յօդուածին քննութեան առթիւ կղած ակնարկութիւններուն մէջ՝ բաւական սխալ կէտեր կը նկատուին, եւ եկեղեցական եւ աշխարհական դասակարգութիւնները ստեղծելու եւ գանոնք այսպէս դէմ առ դէմ նկատելու կուրակից չեմ, որովհետեւ ունիմ այն հաւատքը թէ՛ ինչպէս ազգին ծառայող աշխարհականներ՝ նոյնպէս լաւ հոգեւորականներ ունեցած ենք՝ նոյն իսկ Երուսաղէմի մէջ. մեր պատմութիւնը այս է, ասկէ դուրս եղած բաժանումները արուեստական են. հոն կայ զեղծումներու երկար գործ մը որուն համար ազգը իր միջոցները պիտի գործադրէ, բայց պէտք է յիշել թէ Երուսաղէմի մէջ ունինք միաբանութիւն մը, որուն հաւատքը մեծ ըլլայ թէ փոքր, իր կուրծքը իր կեանքը դրած է վանքին պահպանութեան համար. հետեւաբար ես կը նշեմ, որ անոնք որ վարչութեան կողմէ բերուած Երուսաղէմի մէջ ընտրուելիք նոր մարմիններու համար՝ աւելի ուշադիր ընտրութիւն մը կատարելու նպատակով:

Յ. ՇԱՀԻԿԵԱՆ ԷՖ.— Կատարուած վիճաբանութիւնները լսողը, անմիջապէս պիտի համոզուի թէ Յանձնաժողովոյ մշտադրութիւնը չէ հասկցուած ամենեւին, Դուրեան Սրբազանը իր կողմէ նոր միաբաններ չյայտնեց այս խնդրին մէջ. Սկսելով միաբաններու առողջ ըլլալու պայմանէն՝ միւս երեք չորս յատկութիւնները, որոնք դրուած են այս չորրորդ յօդուածին մէջ 1860ի կանոնադրէն ի վեր արդէն գոյութիւն ունեցող պայմաններ են, հետեւաբար մեր կողմէն չեն ստեղծուած: Սակայն, այնքան տարիներէ ի վեր վանքին նուիրական շահերը նկատողութեան չեն առնուած եւ պատահելէ որ ֆրանկալոնով վարակեալ անձեր կըցնէր են մանկէ միաբանութեան մէջ, իսկ թէ ազէաներու եւ 16 տարեկանէն վար միաբանները ընդունելութենէն առաջ եկած խոշոր գայթակղութիւնները հարկ չկայ այստեղ թուել, դուք ասոնք կը նկատէք իրենց

կողման յարմարաւոր անձեր, եւ եթէ չէ ինչ միջոց պիտի գործադրենք վերջ գնելու համար այս վիճակին, կանոնադիր մը պատրաստողները միաբանին ընդունելութեան համար աւելի նուազագոյն պայմաններ չէին կրնար նշանակել, արդեօք եկեղեցիի պաշտօնեայ մը այսքան սահմանափակ յատկութիւններէ ալ դուրի գտնուի՞, բայց մեզ ամենէն աւելի հետաքրքրողը անձնական արժանիքներն են եւ աւելի մեր ուշադրութիւնը գրաւողը վանքի տնտեսական մասն է, դուք այս մասին պէտք եղած կարեւորութիւնը տալէն յետոյ՝ միաբանին համար ինչպէս որ կուզէք այնպէս ըրէք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ընդհանուր կերպով չորրորդ 32րդ եւ 36րդ յօդուածներուն վրայ վիճաբանութիւն տեղի ունեցաւ, կրնանք քուէարկել այս յօդուածները:

Ա. ԱԼՊՈՅԱՆ ԷՖ.— Վիճաբանութիւնները տակաւին եղրակացութեան մը չյազեցան որպէսզի քուէի գնել կարելի ըլլայ, այսօր այս խնդրոյն եղրակացութիւնը հնարաւոր չեղեալ:

Տ. ՄԱՂԱՔԻՍԵՊՍ. ՏԵՐՈՒՆԵԱՆ.— Իբրեւ Երուսաղէմի վիճակին իրազեկ, կուզեմ փոքրիկ բացատրութիւն մը տալ, երուսաղէմի միաբաններէն միջնակարգ կրթութիւն կը պահանջուի, ամենէն աւելի փափաքուածը վանքին բարեկարգութիւնն է, բայց, ես, այս տեսակ պայմաններ աւելորդ կը նկատեմ, որովհետեւ հոն չարքաշ ծառայութիւն եւ զինուորութիւն կայ, աիւ եւ գիշեր անքուն աքնութիւն աշխատութիւն, հետեւաբար, կը վախճամ որ, ոչ միջնակարգ կրթութիւն ստացողները այս ծառայութիւնը կատարեն, եւ ոչ ալ այդպիսի կրթութիւն ունեցողները երթան այս պայմաններուն մէջ միաբան ըլլան: Միջնակարգ կրթութիւն ունեցող միաբաններ եղած են, որոնք չեն կրցած տոկալ այս դժուարակիր ծառայութեանը, ուրիշ կերպով միաբանութեան զարգացման հոգ կրնայ տարուիլ, եկեղեցական, քրիստոնէական պատմութեան ուժ տալով եւ անոնց մտաւոր եւ մարմնական կրթութեան հոգ տանելով:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Յօդուածները քուէարկութեան ենթարկելու համար ժողովը մեծամասնութիւն չունի, հետեւաբար այս աշխատութիւնը կը վերադառնա յաջորդ նիստին:

(Ստեանը փակուեցաւ ժամը 6 ին.)
Ստեանադպիր Ստեանայեան
Հ. Արամեանց Տէր. Ն. Տաղաւարեան

(Գ. Վիճակ)			Մուշ
Գում գարու, Գումգարուի դուրս			106. Գեղամ Էֆէնտի Տէր-Կարապետեան Զմշկածագ-Զարսան-ճագ
69. Դաւիթ Էֆէնտի Տէր-Մովսէսեան			107.
70. Շամարձում » Դոյաճեան			Տրապիզոն
71. Սարգիս » Սուրն			108. Օննիկ Էֆէնտի Զիֆէ-Սարաֆ
72.			(Բ. Վիճակ)
Կէտիկ վաշա			Աղմամար
73. Շմայեակ Էֆէնտի Արամեանց			109. Ա. Վաւմեան Էֆէնտի
74. Յարութիւն » Ճանկիլեան			Բալու
75. Յակոբ » Աւետիսեան			110. Գամէր Էֆէնտի Շիրինեան
76. Յակոբ » Նշանեան			Եօզլատ
77. Ներսէս » Զաքարեան			111. Աւետիս Էֆէնտի Ճինիվիզեան
Սամաթիա Ա. Գեորգ			Կեսարիա
78. Գրիգոր Էֆէնտի Զօհրապ			112. Վահան Էֆէնտի Էսաեան
79. Լեւոն » Սաաճեան			Հալէպ-Այնթապ
80. Շալի » Խօճասարեան			113. Սարգիս Էֆէնտի Գնաճեան
81. Պարգե » Փափազեան			Նիկովիզ-իա
82. Լեւոն » Սեղբոսեան			114.
83. Ռուբէն » Փափազեան			Պաղտատ
84.			(Ե. Վիճակ)
Գումգարու-Կիւստուրիէ			Ակն
85. Երուանդ Էֆէնտի Խորասան			115. Տօրմ. Ներսէս Էֆէնտի Թիւլեան
86. Լեւոն » Տէմիրճիպաշեան			Սղերդ
87. Ռուբէն » Զարգարեան			116. Սերովբէ Էֆէնտի Նորատունկեան
88. Ոսկան » Մարտիկեան			
89. Կոպեւնիկ » Խաչատուրեան			
Թօփ-գարու			(Գ. Վիճակ)
90. Գեորգ Էֆէնտի Սիմէլեան			Ակն
Ղաւաթիա-Պէլլոզ			117. Ատովմ Էֆէնտի Երեցեան
91. Երուանդ Էֆէնտի Օտեան			Արարիկի
Նաուլլ-գարու			118. Արմաթի Էֆէնտի Սարաֆեան
92. Նշան Էֆէնտի Գալպեան			Եղեւսիա
93. Տիգրան » Մանուկեան			119. Սեպուհ պէլ Էմիլեան
Սամաթիա Ալմըմբէր			Զգմիւնիա
94. Պետրոս Էֆէնտի Գալպեան			120. Լեւոն Էֆէնտի Տնտեսեան
Սկիւտար Ա. Խաչ			Հաճըն
95. Բարսեղ Էֆէնտի Աւետիսեան			121. Տէվլէմ Էֆէնտի Տաւրեան
96. Գարեգին » Տէմիրճիպաշեան			Մալաթիա
97. Յարութիւն » Շահրիկեան			
98. Վարդգէս » Սեղեմիկեան			
99. Յակոբ » Միստեան			
Բումէլի-Կիսար, Պոյաճը-գիւղ, Եէնի-գիւղ			1 2.
100. Արթուր Էֆէնտի Տէր Յակոբեան			Պանորմա-Պալլքէսի
ԳԱՆԱՌԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՆԱՆԻՔ			123. Տիւրան Էֆէնտի Երկանեան
(Ա. վիճակ)			Վան
Եգիպտոս			124.
101. Վահան Էֆէնտի Թէքեան			(Գ. Վիճակ)
Եգիպտոս			Աղրիանուպոլիս
102. Յակոբ Էֆէնտի Պօնուգեան			125.
Խարբերդ			Ատանա
103. Տօրմ. Փաշայեան Էֆէնտի			126. Արիստակէս Էֆէնտի Գասպարեան
Կարին			Բաղէշ
104. Սողոմոն Էֆէնտի Տէր-Ազարեան			127. Աղէքսանդր Էֆէնտի Փանոսեան
Կիւրին-Մանցըմք			Կուտինա-Արիս-Գարա-Կիսար
105. Արամ Էֆէնտի Անտոնեան			128. Զարեհ Էֆէնտի Խորասանեան

- Պրոհաս
129. Գասսար էֆենտի Նեմցե
Ռօտոսթօ
130. Միհրդատ էֆենտի Հալկազն
Տիգրանակերտ
131. Տիգրան էֆենտի Նազաշեան
Տիվրիկ
- 132.
- (Ե. Վինակ)
- Ամասիա—Մարզուան
193. Տիգրան էֆենտի Մաբտիկեան
Բարերդ
194. Յարութիւն էֆենտի Դարբինեան

- Գաղատիա
135. Տր. Խաչիկ էֆենտի Պօղոսեան
- Գոնեա
136. Բարթող էֆենտի Զօրեան
- Երզնկա
137. Գարրիէլ էֆենտի Նորատունկեան
Մարաշ—Չէյթուն
138. Սմբատ էֆենտի Բիւրատ
Շապին—Գարափիսար
139. Ժագ էֆենտի Սալապլեան
Սերաստիա
140. Տօքթ. Նազարէմ էֆենտի Տաղաւարեան

Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

- | | | | |
|-------------|--------------------------|--------------|------------------------|
| Ա. Ատենապետ | Գարրիէլ էֆ. Նորատունկեան | Ա. Ատենադպիր | Հմայեակ էֆ. Արամեան |
| Բ. » | Տր. Տաղաւարեան էֆենտի | Բ. » | Երուանդ էֆ. Պէյազճեան |
| Գ. » | Պարգեւ էֆ. Փափագեան | Գ. » | Աղեքսանդր էֆ. Փանոսեան |

Ն Ա Խ Ա Ք Ն Ն Ի Զ Դ Ի Ի Ա Ն Ք

ՋԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Տ. Հմայեակ Արքեպս. Դիմաքսեան
- Բ. Արամ էֆենտի Հալաճեան
- Գ. Արշակ էֆենտի Ալպօլաճեան

ԴՍՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Աստուածատուր էֆենտի Խաչատրեան
- Բ. Մարկոս էֆենտի Նաթանեան
- Գ. Հրանտ էֆենտի Ասատուր

ԿԱԼՈՒԱԾՈՑ ԴԻԻԱՆ

- Ա. Պենոն էֆենտի Տէյիրմէնճեան
- Բ. Վահան էֆենտի Կասեան
- Գ. Թորգոմ էֆենտի Պօյաճեան

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Եղուարդ էֆենտի Շիրինեան
- Բ. Խաչիկ էֆենտի Սըվաճեան
- Գ. Լեւոն էֆենտի Տնտեսեան

ՅԱՐԱՅԵՐԱԿԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Յարութիւն էֆենտի Մոստիջեան
- Բ. Բարսեղ էֆենտի Աւետիսեան
- Գ. Նշան էֆենտի Գալպէսեան

ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Տ. Մաղաքիա Արքեպս. Օրմանեան
- Բ. Դարեգին էֆենտի Տէմիրճիպաշեան
- Գ.

ՆԱԽԱՋԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Դաւիթ էֆենտի Տէր-Մովսէսեան
- Բ. Հայկ էֆենտի Խօճասարեան
- Գ. Յարութիւն էֆենտի Շահրիկեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Բարթող էֆենտի Զօրեան
- Բ. Վահան էֆենտի Թէքէեան
- Գ. Ռուբէն էֆենտի Զարդարեան

ՆԼԵԻՄՏԻՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Գ Ի Ն 1 Ղ Ր Ո Ւ Շ

Մեփակհանութիւն Ազգ. Սնտուկին, Ազգ. Ժողովոյ ծախուց յաշկացեալ
Կը ծախուի յազգային Խորհրդարան Ղալաթիոյ